«ԲԱԶՄԱՎԷՊ»Ը 120 ՏԱՐԵԿԱՆ Է

Լրացաւ հայկական ամենաերկարակեաց ամսագրի՝ «Բազմավէպ»ի հրատարակութեան 120 տարին:

1843 թուականի Յունուարին, Իտալիայի Վենետիկ քաղաքի մօտ գտնուող Սուրբ Ղազար կղզում լոյս տեսաւ «Բազմավէպ»ի առաջին համարը, ծնունդ առաւ այն ամսագիրը, որը հետագայում մեծ դեր կատարեց հայագիտութեան զարգացման գործում: Նրա հրատարակութիւնը, առանց ընդմիջման, շարունակւում է առայսօր: «Բազմավէպ»ը 120 տարեկան է: Աշխարհում մեծ չէ այդքան երկարակեաց ամսագրերի թիւը:

Նրա առաջին խմբագիրը Գաբրիէլ Այվազովսկին էր, աշխարհահռչակ ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսկու եղբայրը: 1849–1851 թուականներին «Բազմավէպ»ը խմբագրում էր մեծ պատմաբան ու բանաստեղծ Ղեւոնդ Ալիշանը: Առաջինը Ալիշանն էր, որ թարգմանեց եւ «Բազմավէպ»ի էջերում տպագրեց Բայրոնի «Զայլդ Հարոլդը»:

Շատ ուշագրաւ է «Բազմավէպ»ի առաջին համարը: Այն հետաքրքիր տեղեկութիւններ է պարունակում ազգային պատմութեան, դպրութեան ու մատենագրութեան մասին: Ահա «ՀԱՅԵՐՈՒՆ ՌՈՒՍԱՑ ՀԵՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԿՍԻԼԸ» յօդուածը: Նրա մէջ պատմւում է, որ պարսկահայ վաճառական Զաքար Սարհատեանը, 1660 թուականին, հասնում է Մոսկուա եւ Ռուսաց Ալեքսէյ կայսրին նուիրում մի թանկարժէք, զարդագործուած աթոռ, որը պատրաստել էր Զաքարի հայրը: Այդ աթոռի վրայ կային 876 ադամանդ, 1·223 մանր ու խոշոր յակինթ: Իր ժամանակին այդ աթոռը գնահատուել է 24·443 ռուբլի: Այս դէպքից եօթ տարի անց, Ռուսաց կայսրը դաշնագրութիւն է կապում ջուղայեցոց հետ, որից յետոյ Հայերը սկսում են առեւտրական գործերով յաճախակի երթեալ Ռուսաստանում:

«Բազմավէպ»ի նկարագրած այս աթոռը ներկայումս ցուցադրւում է Մոսկուայի Կրեմլի զինապալատում:

Ամսագրի երկրորդ եւ երրորդ համարներում, խմբագիր Գաբրիէլ Այվազովսկու խմբագրութեամբ առաջին անգամ հայերէն լոյս են տեսնում Կոլոմի առակները:

«Բազմավէպ»ը իր ընթերցողներին ծանօթացրել է անտիկ աշխարհի կլասիկներից շատերի ստեղծագործութիւններին: Հոմերոսի «Իլիական»ն ու «Ոդիսական»ը, Որատիոսը («Արուեստ բերթողական»), Վիրգիլիոսը («Ենէական»), Եզովպոսը (Առակք), Եսքիլէսը, Եւրիպիդէսը, միջնադարեան հայ պոեզիայի ակնառու ներկայացուցիչներ՝ Յովհաննէս Սարկաւագի, Կոստանդին Երզնկացու եւ ուրիշների գործերը:

Այս ամսագրից է հայ ընթերցողն առաջին անգամ ծանօթացել հանճարեղ Դանտէի եւ «Ուրկայինայի Հոմերոս»՝ Շեւչենկոյի անմահ ստեղծագործութիւններին:

«Բազմավէպ»ում բազմաթիւ յօդուածներ են տպագրուել նշանաւոր քաղաքների ճարտարապետական յուշարձանների մասին, հետաքրքրական տեսութիւններ Լեոնարդոյ Դա Վինչիի, Ռաֆայէլի, Ռեմբրանդտի, Տորվալդսէնի եւ ուրիշների մասին:

«Բազմավէպ»ի էջերը երկար տարիներ զարդարել են Ղ. Ալիշանի, Բ. Սարգիսեանի, Ն. Բիւզանդացու հայագիտական մենագրութիւններն ու յօդուածները:

Զարգացնելով իրենց նախորդների լաւագոյն տրադիցիաները, Մխիթարեանները այժմ էլ շարունակում են ուշագրաւ երկեր ստեղծել հայագիտութեան վերաբերեալ, աւելի ու աւելի բոլորակալից դարձնելով «Բազմավէպ»ի էջերը:

Հարիւրհնան տարուայ ընթացքում «Բազմավէպ»ի լոյս տեսած համարները կարող են կազմել մի ամբողջ գրադարան:

Հ. ԽԱՉԱՏՐԵԱՆ
ՀՀԳ-ի թղթակից

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-ԱԳԱ ԳԱ

ԵՐԵՒԱՆ

Օրգան ՀԿՊ Երեւանի քաղաքային կոմիտէի եւ աշխատաւորների դեպուտատների Երեւանի քաղաքային Սովետի

Դրդ տարի, թիւ 11 (1522), *կիրակի,*
13 *Յունուարի,* 1963 *թ.*

ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԱՇՈՏ Ա. — *Բայը ժամանակակից հայերէնում:* Երեւան, ՀՍՍՌ ԳԱ *Հրտ.* 1962, *էջ* 727:

ԱԴԱՄԵԱՆ ՊԵՏՐՈՍ. — *Նամակներ:* Կազմեց եւ ծանօթագրեց Գ. Խ. Սահակեան: Երեւան, ՀՍՍՌ ԳԱ *Հրտ.* 1959, *էջ* 335:

ԱԹԱՅԵԱՆ Ռ. — *Հայկական խաղային նոտագրութիւնը:* Երեւան, ՀՍՍՌ ԳԱ *Հրտ.* 1959, *էջ* 286:

ԱՂԱՅԵԱՆ ԵԴՈՒԱՐԴ. — *Հայ լեզուաբանութեան պատմութիւն. հատոր երկրորդ:* Երեւան, ՊԵՀ. *Հրտ.* 1962, *էջ* 387:

ԱՂԱՅԵԱՆ ՂԱԶԱՐՈՍ. — *Երկերի ժողովածու. հատոր Ա:* Երեւան, *Հայպետհրատ,* 1962, *էջ* 411:

ԱՂԱՅԵԱՆ ՂԱԶԱՐՈՍ. — *Երկերի ժողովածու. հատոր Բ:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 588:

ԱՆԱՆԵԱՆ ՎԱԽՏԱՆԳ. — *Հայաստանի կենդանական աշխարհը:* Հատոր Բ. *կաթնասուններ:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 413:

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ. — *Տիեզերագիտութիւն:* Թարգմանութիւնը գրաբարից ուսումնասիրէց, առաջաբանը եւ ծանօթութիւնները Բ. Ս. Տէր Դաւթեանի եւ Ս. Ս. Արեւշատեանի: Երեւան, ՀՍՍՌ ԳԱ *Հրտ.* 1962, *էջ* 127:

ԱՆԱՍԵԱՆ Յ. — *Ժէ. դարի ազատագրական շարժումներն արեւմտեան Հայաստանում:* Երեւան, ՀՍՍՌ ԳԱ *Հրտ.* 1961, *էջ* 444:

ԱՌԱՔԵԼԵԱՆ ՎԱՐԱԳ. — *Ժամանակակից հայերէնի հոլովների եւ հոլովական կապակցութիւնների առումները:* Երեւան, ՀՍՍՌ ԳԱ *Հրտ.* 1957, *էջ* 300:

ԱՐՄԷՆ ՄԿՐՏԻՉ. — *Վարդաւան (վիպակներ):* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 531:

ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ ԱՇՈՏ. — *Ակը Բիւրականի:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 401, *փոքրագիր:*

ԱՒԱԳԵԱՆ ԱԲԻԳ. — *Պատմուածքներ:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 200

ԱՒԱԳԵԱՆ ԵԴՈՒԱՐԴ. — *Արեւի հիւրերը:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 8, *մեծագիր, պատկերազարդ:*

ԲԱԲԱՅԵԱՆ ԱՐՇԱԼՈՅՍ. — *Պերճ Պռոշեան:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 332:

ԲԱՇԱԼԵԱՆ ԼԵՒՈՆ. — *Ընտիր երկեր:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 286:

ԲՐՈՒՏԵԱՆ ԳԷՈՐԳ. — *Սեմանտիկեան փիլիսոփայութեան քննական վերլուծութիւնը:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 577:

ԲՐՈՒՏԵԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ. — *Թաթուլ Ալթունեան:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 115, *փոքրագիր:*

ԲՐՈՒՏԵԱՆ ՅԻՅԻԼԻԱ. — *Արամ Տէր-Յովհաննիսեան:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 103, *փոքրագիր:*

ԳԱՍՊԱՐԵԱՆ ՍԵՐԳԷՅ. — *Սփիւռքահայ գաղթականներն այսօր:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 246:

ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳԷՈՐԳ. — *Յովհաննէս Երզնկացու փիլիսոփայական հայեացքները:* Երեւան, ՀՍՍՌ ԳԱ *Հրտ.* 1962, *էջ* 135:

ԳՐԻԳՈՐԵԱՆ ԶԱՒԷՆ. — 1812 *թուականի հայրենական պատերազմը:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 104:

ԴԱՐԵԱՆ ԶԱՐՋԱՆԴ. — *Քասազ (ժողովածու):* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 337:

ԴՈՒՐԵԱՆ ԼԻՒԴՎԻԳ. — *Արեւը բոլորիսն է:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1963, *էջ* 106:

ԶԱՐԵԱՆ ՆԱՅԻՐԻ. — *Երկերի ժողովածու:* Ա. *հատոր:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 569 – Բ. *հատոր:* Անդ, 1962, *էջ* 661:

ԶՕՀՐԱՊ ԳՐԻԳՈՐ. — *Երկերի ժողովածու:* Հատոր Ա. Բ: Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 565 *եւ* 515:

ԷՄԻՆ ԳԷՈՐԳ. — *Մինչեւ այսօր:* Երեւան, *Հայպետհրատ,* 1962, *էջ* 285:

ԹԱԹԻԿԵԱՆ ՇԱՀԷՆ. — *Նրա ճանապարհը:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 547:

ԽԵՋՈՒՄԵԱՆ ՎԻԳԷՆ. — *Գոյներ եւ երանգներ:* Երեւան, *ՀՊՀրտ.* 1962, *էջ* 285:

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՏԻԳՐԱՆ. — *Վրաց զրական մտքը Հայաստանի եւ Հայերի մասին:* Երեւան, *Հայպետհրատ,* 1962, *էջ* 163, *փոքրագիր:*

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ — — — **PRIX DE L'ABONNEMENT ANNUEL**

Իտալիայ համար . .	3500 *Լիր*	Pour l'Italie. . . 3500 Lires
Արտասահմանի համար .	8 *Տոլար*	Pour l'Etranger . . 8 Dollars
Մէկ թիւը՝ 250 *լիր* –	0,50 *Տոլար*	Le Numéro: 250 Lires – 0,50 Dollars

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ «ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ» ՆՊԱՍՏՈՎ
PUBLIE AVEC LE CONCOURS DE LA « FONDATION CALOUSTE GULBENKIAN »

Direzione - Amministrazione - Pubblicità - Abbonamenti — Isola San Lazzaro - Venezia (Italia) - Tel. 60-104
Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia
Direttore responsabile : P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia